«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 1 - 1

27 օգոստոսի 2020 թվականի (հեռավար կարգով)

2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացը կազմակերպելու մասին

Նոր կորոնավիրուսային համաճարակի տարածման հետևանքով 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացը հիբրիդային տարբերակով կազմակերպելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Ուսումնական գործընթացը կազմակերպել 3 (երեք) հերթով՝ դասերի տևողությունը սահմանելով 70 րոպե:

	1-ին հերթ	2-րդ հերթ	3-րդ հերթ
1 - 2	09:30 - 10:40	14:00 - 15:10	18:20 - 19:30
3 - 4	10:50 - 12:00	15:20 - 16:30	19:40 - 20:50
5 - 6	12:10 - 13:20	16:40 - 17:50	21:00 - 22:10
Ախտահանման ժամեր	07:30 - 8:30	13:20 - 14:00	17:50 - 18:20

2. Յուրաքանչյուր 8-րդ պարապմունքից հետո կազմակերպել առնվազն մեկ առցանց պարապմունք՝ 80 րոպե տևողությամբ դասերի բաց թողնված 10 րոպե ժամաքանակի լրացման նպատակով:
3. Առկա բակալավրիատի 1-ին կուրսի դասերը սկսել սեպտեմբերի 1-ից առկա հիմունքներով՝ սեպտեմբերի 15-ից անցում կատարելով հիբրիդային եղանակի:
4. Առկա բակալավրիատի 2-րդ, 3-րդ, 4-րդ և առկա մագիստրատուրայի 1-ին, 2-րդ կուրսերի դասերը սկսել սեպտեմբերի 15-ից՝ հիբրիդային եղանակով:

5. Հեռակա մագիստրատուրայի 3-րդ կուրսի դասերը սկսել սեպտեմբերի 22-ից՝ հիբրիդային եղանակով:
6. Հեռակա բակալավրիատի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և հեռակա մագիստրատուրայի 1-ին, 2-րդ կուրսերի դասերը սկսել նոյեմբերի 2-ից՝ հիբրիդային եղանակով:
7. Ելնելով ուսանողների հավասարաչափ բաշխման և կուտակումներից խուսափելու անհրաժեշտությունից՝ ուսումնական գործընթացի կազմակերպման հերթափոխերը սահմանել հետևյալ կերպ՝
   1) առկա բակալավրիատի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերը՝ առաջին հերթ. բացառիկ դեպքերում՝ շաբաթական մեկ օր երկրորդ հերթ,
   2) առկա մագիստրատուրայի 2 տարվա ուսուցման 1-ին և 2-րդ կուրսերը՝ երկրորդ հերթ,
   3) առկա մագիստրատուրայի 1,5 տարվա ուսուցման 1-ին և 2-րդ կուրսերը՝ երրորդ հերթ:
8. Բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կրթաձևերում դասախոսություններն անցկացնել առցանց:
9. Առցանց դասախոսությունները կազմակերպել միասնական գործիքով (zoom, google meet) և դասախոսությունների հղումներն ամրակցել հաստատված դասացուցակին:
10. Առցանց դասախոսություններին ուսանողները պարտավոր են ամբողջ ընթացքում միացրած վիճակում թողնել տեսակապը, իրենց օգտահաշիվները բացել իրենց անուն ազգանուններով:
11. Դասախոսություններին, սեմինար և լաբորատոր պարապմունքներին իրականացնել ուսանողների բացակայությունների հաշվառում: Հաշվառումը և գնահատումն իրականացնել ums.asue.am հարթակի էլեկտրոնային մատյաններով:
12. Առկա բակալավրիատում առկա եղանակով անցկացնել սեմինար, գործնական ու լաբորատոր պարապմունքները՝ խմբավորելով դրանք շաբաթական երկու կամ երեք օրվա մեջ:
13. 65 և բարձր տարիքային խմբի, ինչպես նաև ՀՀ պարետի 18.08.2020 թ. N 253 որոշման հավելված 3-ի «5)»-րդ կետի «բ», «գ» և «դ» ենթակետերով սահմանված հիվանդություններն ունեցող խոցելի խմբերի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները կարող են աշխատանքի ներկայանալ հատուկ պաշտպանիչ միջոցների կիրառությամբ: Նրանք ռեկտորատի որոշմամբ կարող են դասաժամերը պարապել առցանց եղանակով:
14. Եթե աշխատակազմի որևէ անդամի մոտ նկատվում է գրիպի կամ սուր շնչառական վարակների ախտանշաններ, ապա բացառվում է վերջինիս աշխատանքի ներկայանալը:

15. ՀՀ պարետի 18.08.2020 թ. N 253 որոշման հավելված 3-ի «5)»-րդ կետի «բ», «գ» և «դ» ենթակետերով սահմանված հիվանդություններն ունեցող խոցելի խմբերի ուսանողները կարող են սեմինար պարապմունքների ներկայանալ հատուկ պաշտպանիչ միջոցների կիրառությամբ: Նրանք ռեկտորատի որոշմամբ կարող են ուսումնառությանը մասնակցել բացառապես առցանց եղանակով:
16. Արգելվում է բուհում արտակարգ դրության պայմաններում անցկացնել զանգվածային միջոցառումներ:
17. Գիտական խորհրդի նիստերն անցկացվում են բացառապես հեռավար:
18. ՀՊՏՀ-ում սահմանել հետևյալ հակահամաճարակային կանոնները.
    - 1-ին հերթի դասեր ունեցող ուսանողները և աշխատակիցները պետք է համալսարան ներկայանան առավոտյան ժամը 8:30, իսկ 2-րդ հերթի ուսանողները և դասախոսները՝ ժամը 13:20՝ դասապրոցեսը սահմանված ժամերին սկսելու համար:
    - Մինչև համալսարան մուտք գործելը անհրաժեշտ է պահպանել սոցիալական հեռավորություն՝ կանգնելով համալսարանի մուտքերի առջև արված գծանշումներով:
    - Համալսարան մուտք գործելիս կկատարվի ուսանողների և աշխատակիցների անհատական ջերմաչափում: Բուհը վարում է ուսանողների և աշխատակիցների ջերմաչափման մատյան: Մատյանում գրանցվում են միայն 37 և ավելի ջերմաստիճան ունեցող ուսանողների և աշխատակիցների տվյալները, որոնց մուտքը բուհ արգելվում է:
    - Պարտադիր է կրել դիմակ համալսարանում գտնվելու ողջ ժամանակահատվածում:
    - Ուսանողները և աշխատակիցները համալսարան պետք է մուտք գործեն հետևյալ մուտքերից.
        - Կառավարման ֆակուլտետ՝ մուտքը Նալբանդյան փողոցից (կենտրոնական մասնաշենք):
        - Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ՝ մուտքը Ա.Մանուկյան փողոցից (դարպասներ):
        - Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ՝ մուտքը Ա.Մանուկյան փողոցից (դարպասներ):
        - Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ՝ մուտքը Ա.Մանուկյան փողոցից:
        - Ֆինանսական ֆակուլտետ՝ մուտքը Ա.Մանուկյան փողոցից:

- Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ՝ մուտքը Հերացի փողոցի կողմից:

19. **Հանձնարարել.**

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին՝

- հսկողություն իրականացնել հիբրիդային եղանակով կազմակերպվող դասացուցակների կազմման և դասապրոցեսի պատշաճ որակով իրականացման նկատմամբ,
- հսկողություն իրականացնել moodle.asue.am հարթակում 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի բոլոր կրթաձևերի մոդուլների ձևավորման և պատշաճ լրացման նկատմամբ:

Վարչատնտեսական և կազմակերպական դեպարտամենտի տնօրենին՝

- հսկողություն իրականացնել համալսարանում և մերձակա տարածքում պատշաճ գծանշումների իրականացման և պահպանման նկատմամբ,
- հսկողություն իրականացնել համալսարանում սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային նորմերի պահպանման, յուրաքանչյուր հերթափոխից հետո լսարանների և տարածքի ախտահանման կազմակերպման, ախտահանիչ միջոցների տեղադրման և դրանցում ախտահանող նյութերի առկայության ապահովման նկատմամբ,
- հսկողություն իրականացնել ուսանողների և աշխատակիցների ջերմաչափման, մատյանների վարման նկատմամբ՝ բացառելով 37 C^0 և ավելի ջերմություն ունեցող, ինչպես նաև առանց պաշտպանիչ դիմակների անձանց մուտքը համալսարանի տարածք,
- հսկողություն իրականացնել համալսարանի տարածքում դասամիջոցների ընթացքում անձանց կուտակումների նկատմամբ՝ բացառելով դրանք:

Դեկաններին՝

- յուրաքանչյուր ակադեմիական խմբի հատկացնել առանձին լսարան և հսկողություն իրականացնել դասացուցակին կցված լսարանների փոփոխությունների բացառման նկատմամբ,
- բացառել դասաձախողումները և դասաձախողման արձանագրված յուրաքանչյուր դեպքի առնչությամբ զեկուցել ռեկտորատին,
- մինչև սեպտեմբերի 12-ը հրապարակել առկա բակալավրիատի 2-րդ, 3-րդ և 4-րդ, առկա մագիստրատուրայի 1-ին և 2-րդ, ինչպես նաև հեռակա մագիստրատուրայի 3-րդ կուրսերի դասացուցակները,

- կազմակերպել բաց թողնված դասաժամերի լրացումը պրոֆեսորադասախոսական կազմի կողմից:
- հսկողություն իրականացնել ums.asue.am հարթակում էլեկտրոնային մատյանների պատշաճ վարման նկատմամբ,
- հսկողություն իրականացնել ֆակուլտետի տարածքում անձանց միջև սոցիալական հեռավորության պահպանման, ինչպես նաև պաշտպանիչ դիմակներ կրելու նկատմամբ:
- ռեկտորատի քննարկմանը ներկայացնել ՀՀ պարետի 18.08.2020 թ. N 253 որոշման հավելված 3-ի «5)»-րդ կետի «բ», «գ» և «դ» ենթակետերով սահմանված հիվանդություններն ունեցող խոցելի խմբերի ուսանողներին առնչվող տեղեկատվությունը:

Ամբիոնների վարիչներին՝

- կազմակերպել moodle.asue.am հարթակում 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի բոլոր կրթաձևերի համար ձևավորված մոդուլների պատշաճ լրացման աշխատանքները,
- դեկանատների հետ համագործակցված մշակել ձախողված դասերի և բաց թողնված 10 րոպե տևողությամբ ժամանակահատվածի դասաժամերի հեռավար լրացման գրաֆիկներ,
- բացառել հաստատված դասացուցակների խախտումները,
- ռեկտորատի քննարկմանը ներկայացնել 65 և բարձր տարիքային խմբի, ինչպես նաև ՀՀ պարետի 18.08.2020 թ. N 253 որոշման հավելված 3-ի «5)»-րդ կետի «բ», «գ» և «դ» ենթակետերով սահմանված հիվանդություններն ունեցող խոցելի խմբերի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներին առնչվող տեղեկատվությունը:

20. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Գրիգորյանին:
21. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Գրիգորյան**

2020 թ. օգոստոսի 27
Երևան